ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հունիսի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

79
(3110)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԶԻՉԻ ԿԱՐԻԵՐԱ ՉՈՒՆԵՑՈՂԻՆ ՎՍՏԱՀԵԼ ԵՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ

Հայկական ֆուտբոլի աղետալի վիճակի մասին խոսելը թերեւս անիմաստ է, ու ասելիք եւ անելիք, թվում է, թե չկա, բացի ՀՖՖ այս թիմի հեռացումից՝ ի դեմս Արմեն Մելիքբեկյանի ու ֆեդերացիայի իրական ղեկավար Արմեն Նիկողոսյանի:

Դժգոհության հանրային ալիքը դեռ իր ասելիքը կասի այս մարդկանց, սակայն մինչ այդ տեղի ունեցավ հերթական աբսուրդային որոշումը, որը կայացրեց ֆուտբոլի ֆեդերացիան. Հայաստանի մինչեւ 19 տարեկանների հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակվել աշխարհահռչակ ֆրանսահայ ֆուտբոլիստ, աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Յուրի Ջորկաեֆի եղբայրը, ով, ըստ բաց աղբյուրների ուսումնասիրության, չունի մարզչական աշխատանքի փորձ, ավելին՝ Միշա Ջորկաեֆն ի տարբերություն եղբոր՝ երբեք բարձրակարգ թիմերում չի խաղացել, ու համեմատություն տանել եղբոր անցած ճանապարհի հետ անիմաստ է: Հարցն այստեղ այն է, որ, փոխանակ խելքները գլուխները հավաքեն անդադար պարտություններից հետո ու գոնե կանգնեցնեն հայկական ֆուտբոլի գահավիժումը, հավաքեն ոլորտի գիտակների, հակառակը՝առաջնորդվում են անհաշվարկ ու անհիմն նշանակումներով, որոնք նույնիսկ չեն բացատրվում: Նույնիսկ ՀՖՖ պաշտոնական կայքում այդ մարդու կենսագրությունը չկա: Ֆուտբոլային գիտակ, ավագ սերնդի ներկայացուցիչներից մեկը մեզ հետ զրույցում հայտնեց, որ «սրանք (ՀՖՖ ներկա ղեկավարները) հայկական ֆուտբոլը դարձրել են որբի գլուխ՝երբ ինչ ուզում անում են այդ որբի գլխի հետ»: Իսկ 2026թ.-ի ընտրություններին պատրաստվող Նիկոլ Փաշինյանը կարծես այս ամենին նայում է մատների արանքով, կամ նրան դուր է գալիս հայկական ֆուտբոլի պարտված ու ողբալի վիճակը:

Հ.Գ. երեկ համակարգից ոստիկան հեռացվեց՝ լրագրողի հետ կոպիտ վարվելու համար, օրեր առաջ Վ. Սարգսյանի անվան մարզադաշտում նախկին ոստիկան հարյուրավոր մարդկանց աչքի առջեւ բռունցքով հարվածեց անչափահաս ֆուտբոլասերի, բայց մինչ օրս այդպես էլ չի պատժվել:



ՀՀ վերաքննիչ դատարանը դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ գնացել է ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի դեմ հարուցված քրեական գործով որոշում կայացնելու: ՀՀ վերաքննիչ դատարանը կամ կբավարարի մեղադրվող Ջալալ Հարությունյանի պահանջը եւ նրան կարդարացնի, կամ գործը կուղարկի առաջին ատյանի դատարան՝նոր քննության, եւ չի բացառվում, որ առաջին ատյանի դատարանի որոշումը թողնի անփոփոխ: Հիշեցնենք՝ առաջին ատյանի դատարանը Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանին դատապարտեց հինգ ու կես տարվա ազատազրկման: Դատարանն ավելի վաղ 50-ամյա գեներալ-լեյտենանտին մեղավոր էր ճանաչել պատերազմի ժամանակ զինվորական ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսեւորելու համար: Առաջին ատյանի դատարանի այս որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարանում, ու մեղադրվող կողմը ամեն ինչ անում է ՀՀ վերաքննիչ դատարանում նիստերը հետաձգելու համար, որպեսզի վաղեմության ժամկետի հիմքով՝ ամբաստանյալը ազատվի պատասխանատվությունից: Սակայն փորձերն անցան ապարդյուն, եւ հունիսի 18-ին ՀՀ վերաքննիչ դատարանը որոշում կկայացնի: Հիշեցնենք, որ Ջալալ Հարությունյանի դեմ հարուցված գործով քրեական վարույթի վաղեմության ժամկետը հոկտեմբերին կլրանա: Ջալալ Հարությունյանը հրաժարվել է ՀՀ վերաքննիչ դատարանում իր պաշտպաններից եւ նոր պաշտպանի է ներգրավել: Ավելին՝ ՀՀ վերաքննիչ դատարանում դատավոր Մխիթար Պապոյանը խստորեն հարցադրումներ արեց մեղադրվող կողմին, ինչպես նաեւ տուժողների հարազատներին եւ մեղադրող դատախազին՝բարձրացնելով զոհված զինծառայողների, մյուս մեղավորների հարցը պատերազմական գործողությունների ժամանակ:

Չնայած, որ Մերձավոր արեւելքում իրավիճակը կտրուկ գերլարվել է, հարեւան Իրանը մահացու վտանգի առջեւ է, Հայատանի իշխանությունները շատ ակտիվ պատրաստվում են իշխող կուսակցության՝ ՔՊ վարչության սեպտեմբերին կայանալիք ընտրություններին: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ամերձ աղբյուրներից տեղեկացավ, որ արդեն սկսվել են վարչության անդամների ինքնառաջադրումները, ու սկանդալով հեռացած ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանն էլ է առաջադրել իր թեկնածությունը: Ըստ մեր տեղեկությունների՝ ՔՊ-ականները մինչեւ օգոստոս ամիս առաջադրվելու հնարավորություն ունեն, բայց իրականում առաջադրվում են այն անձինք, ովքեր Նիկոլ Փաշինյանի վստահությունն են վայելում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս պահին ՔՊ վարչության անդամ դառնալու համար ինքնառաջադրվել են նաեւ ԱԺ ՔՊ խմբակցության կին պատգամավորները՝ Հասմիկ Հակոբյանը, Հերիքնազ Տիգրանյանը, Ալխաս Ղազարյանը, Արուսյակ Ջուլհակյանը: Մեր աղբյուրները նշում են, որ կանայք այս անգամ ավելի շատ են ներկայացված լինելու կուսակցության վերնախավում, ու հիմա թեժ պայքար է ընթանում: ԱԺ պատգամավոր Արփի Դավոյանը, որ այժմ ՔՊ վարչության անդամ է, թիմին ասել է՝ չի առաջադրվելու:

Վարդապետների՝ կուսակրոնությունը խախտելու կամ չխախտելու հանգամանքը տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը համարում է «ազգային հարց եւ ոչ միայն եկեղեցականների համար»: Այս ձեւակերպումն արտահայտում է ոչ թե Խուդաթյան անհատի կարծիքը, այլ Նիկոլ Փաշինյանին հաճոյանալ ցանկացող անձի վարքագծի դրսեւորում է: Փաշինյանական կոչին միացած Խուդաթյանը, ով Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում պնդեց, թե Կաթողիկոսին հեռացնելու քայլերը տեղավորվելու են Սահմանադրության, օրենքների եւ բարոյականության շրջանակում, իր արտահայտած մտքերի պես հետաքրքիր հայտարարագիր է ներկայացրել: Դավիթ Խուդաթյանը 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ունի մեկ բնակարան բազմաբնակարան շենքում, որը ձեռք է բերել 2019 թվականին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Փարաքարում ընտրությունները տապալած Խուդաթյանը նախորդ տարի, որպես տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված տրանսպորտի միջոց, հայտարարագրել է 2020 թվականի արտադրության, 8,5 մլն դրամ արժողությամբ TOYOTA մակնիշի մեքենա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱՅՍ ԱՄԵՆԻ ՀԻՄՔՈՒՄ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆՆ Է», ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Եկեղեցու դեմ տարվող արշավի, բարձրաստիճան հոգեւորականների թիրախավորման, վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացի, ինչպես նաեւ Բաքվում պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության դատավարության վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանի հետ:

-Պարոն Աբրահամյան, վերջին շրջանում տեսնում ենք, թե ինչ արշավ է սկսվել ընդդեմ Հայ Առաքելական եկեղեցու. թիրախավորված են ինչպես եկեղեցին, այնպես էլ հոգեւոր առաջնորդները: Ի՞նչ կանխատեսումներ ունեք, եւ վերջապես ինչո՞վ է այս արշավն ավարտվելու:

-Այս ամենի հիմքում վրեժխնդրությունն է, այն առումով, որ Մայր Աթոռը 2020 թվականի պատերազմական գործողություններից հետո մեր երկրում ծավալված ներքաղաքական իրավիճակների ֆոնին իր հստակ դիրքորոշումն արտահայտեց իշխանությունների եւ մասնավորապես վերջինիս հեռանալու վերաբերյալ: Թեեւ դրանից հետո որոշակի լարվածություն կար, բայց գործողություններ տեղի չէին ունենում եկեղեցու դեմ: Իրավիճակը մի փոքր այլ էր: Չպետք է մոռանալ, որ 2018 թվականին այս իշխանությունն իր հիմնական գործողությունները սկսել է զինված ուժերի դեմ ներհասարակական բախումներով, նաեւ Մայր Աթոռի դեմ իր գործողություններով՝ վեհարանի շրջապատման համատեքստում:

-Պարոն Աբրահամյան, ինչու՞ հենց այս ժամանակաշրջանում ծագեց այս իրավիճակը:

-Միակ խնդիրը վրեժխնդրությունը չէ: Իշխանությունը 2018 թվականից ի վեր հսկողությունն իր ձեռքը վերցնելու համար երկու հիմնական ճանապարհով էր գնում. առաջինը՝ներհասարակական լարվածություն ստեղծելու, դրա միջոցով տարբեր խմբեր կառավարելու համար, եւ երկրորդը՝ քայլեր էր իրականացնում պետական եւ այն ինստիտուտների դեմ, որոնք ունեն պետության դիմադրության դեմ պայքարելու բոլոր հնարավորությունները: Դրանցից մեկը Մայր Աթոռն էր: Նրա նկատմամբ իշխանության վերաբերմունքն անսպասելի չի եղել: Այլ է հարցը՝ թե ինչու հենց այս պահին, երբ իշխանությունը բավականին մեծ թափով պատրաստվում է 2026 թվականի ընտրություններին: Ես կարծում եմ՝ որոշակի ուսումնասիրություններ է պետք անցկացնել տարբեր խմբերի ներգրավվածության տեսանկյունից, թե ինչպիսի ազդեցություն կարելի է ապահովել, եւ դա ինչպիսի հարվածներով ու քայլերով է արտահայտվում:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԲՆԱԿԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՉԻ ԼՈՒԾՎՈՒՄ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ

ՀՀ Կառավարության դիմաց հունիսի 19-ին արցախցիները կկազմակերպեն բողոքի ակցիա: Արցախցիները նշում են, որ Կառավարությունն ամիսներ առաջ բնակապահովման ծրագրում խոստացած բարեփոխումները չի կատարել:



«Կառավարությունն ամիսներ առաջ խոստացավ բարեփոխումներ անել բնակապահովման ծրագրում, սակայն մինչ այսօր արված փոփոխությունները չնչին են:

Այդ ամենին զուգահեռ՝ դադարեցվել է նաեւ բնակվարձի փոխհատուցման ծրագիրը, ինչի հետեւանքով շատերը կրկին կանգնել են փողոցում հայտնվելու վտանգի առաջ:

Սա ուղիղ ճանապարհ է դեպի նոր արտագաղթ: Իսկ եթե սկսվի այդ գործընթացը, ապա կդադարի նաեւ մեր հավաքական վերադարձի եւ մնացած բոլոր հիմնարար իրավունքների պահանջը»,- համոզված է «Վերադարձ» հասարակական կազմակերպության նախագահ Անաստաս Իսրայելյանը:

Արցախցի հասարակական-քաղաքական գործիչը նշում է, որ այլեւս ժամանակ ու հավատք չկա՝ նոր խոստումներ լսելու կամ բանակցությունները երկարաձգելու համար:

Պետք է վճռական պահանջ ներկայացնենք իշխանություններին՝ շարունակել բնակվարձի փոխհատուցումն այնքան ժամանակ, քանի դեռ բնակապահովման համակարգում իրական, էական փոփոխություններ չեն արվել: Ես ինքս ինձ խոստացել եմ՝ իմ կյանքի ապրելու մնացած տարիները նվիրել Արցախին եւ արցախցու իրավունքների պաշտպանությանը:

Մեր ամենաթանկը կորցնելուց հետո մենք այլեւս իրավունք չունենք վախենալու կամ տատանվելու: Հունիսի 19-ին՝ժամը 11:00-ին, հավաքվում ենք ՀՀ կառավարության դիմաց՝ բարձրացնելու մեր օրինական, վճռական պահանջը: Ու ամեն մի մտահոգված հայ մարդու մասնակցությունն այս օրը եւ այս ցավալի հարցերի շուրջ կարեւոր է:

Միացի՛ր, սա միայն արցախցու խնդիրը չէ, սա ամբողջ հայ ժողովրդի պատասխանատվությունն է: Չենք թողնի մեզ նորից խաբեն ու նորից դարձնեն ստի եւ կեղծիքի զոհ: Պայքար՝ հանուն հայ մնալու ու հայ ապրելու:

Պայքար՝ հանուն մեր իրավունքների ու արժանապատվության:

Մենք միասնական մի ազգ ենք ու մի մեծ անվան տակ՝ ՀԱՅ»:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿԱՆՉՈՒՄ Է ԻՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Թել Ավիվում Ռուսաստանի դեսպանատունը կոչ է անում իր քաղաքացիներին լքել երկիրը՝Իսրայելի եւ Իրանի միջեւ թշնամանքի սրման ֆոնին : Այս մասին հայտարարել է Իրանում ՌԴ դեսպան Անատոլի Վիկտորովը:

«Իսրայելում գտնվող Ռուսաստանի բոլոր քաղաքացիները պետք է լքեն երկիրը մինչեւ իրավիճակի կարգավորումը», - ասել է Վիկտորովը «Ռոսիա 24» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում՝ խորհուրդ տալով քաղաքացիներին լքել երկիրը Եգիպտոսով, որտեղ նրանք ունեն առանց վիզայի մուտքի իրավունք եւ կարող են ինքնաթիռով վերադառնալ Ռուսաստան:

«Պետք է խոստովանեմ, որ իրավիճակը լարված է», - հայտնել է նա: «Իսրայելում եւ դիվանագետների, եւ ռուս քաղաքացիների կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգը բավականին իրական է թվում»:

Դեսպանը նշել է, որ քննարկվում են արտակարգ իրավիճակների ծրագրեր, եթե անհրաժեշտ լինի ավելի լայն տարհանում իրականացնել:

Հիշեցնենք, որ շաբաթվա վերջին Թեհրանում Ռուսաստանի դեսպանատունը ժամանակավորապես դադարեցրել է իր հյուպատոսության գործունեությունը եւ երկրից դուրս է բերել ՌԴ քաղաքացիների մի խումբ:

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ԱԺ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Տեղի է ունեցել Ազգային ժողովի խորհրդի նիստ: Այն վարել է ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

Քննարկվել եւ հաստատվել են ԱԺ ութերորդ գումարման իններորդ նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին եւ հունիսի 17-ին գումարվող հերթական նիստերի օրակարգի նախագծերը:

Սահմանվել է հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը:

Հունիսի 17-ին գումարվող հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվել է 29 հարց:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ռեջեփ Թայիփ Էրդողանն ու Մասուդ Փեզեշքիանը քննարկել են Իսրայելի եւ Իրանի միջեւ հակամարտությունը, ինչպես նաեւ տարածաշրջանային եւ համաշխարհային խնդիրներ:

Էրդողանը նշել է, որ Իսրայել-Իրան հակամարտության վերաբերյալ բանակցություններ է վարել մի շարք առաջնորդների հետ: Նա ընդգծել է, որ Թուրքիան պատրաստ է ստանձնել միջնորդի դեր՝հակամարտությունն անհապաղ դադարեցնելու եւ միջուկային բանակցություններին վերադառնալու համար:

Էրդողանը վերահաստատել է Թուրքիայի հանձնառությունը տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանմանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՊՈՒՏԻՆԻ ԵՎ ԷՐԴՈՂԱՆԻ ԶՐՈՒՅՑԻՑ

Կրեմլը մանրամասներ է հայտնել Վլադիմիր Պուտինի եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հեռախոսազրույցից:

Հիմնական ուշադրությունը դարձվել է Մերձավոր Արեւելքում կտրուկ սրված իրավիճակին: Վլադիմիր Պուտինը եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանը դատապարտել են Իսրայելի կողմից Իրանի դեմ ձեռնարկված ուժային գործողությունները, որոնք խախտում են ՄԱԿ-ի կանոնադրությունը եւ միջազգային իրավունքի այլ նորմեր:

Նրանք մտահոգություն են հայտնել Իրան-Իսրայել հակամարտության շարունակական սրացման վերաբերյալ: Առաջնորդները կողմ են արտահայտվել ռազմական գործողությունների անհապաղ դադարեցմանը եւ վիճելի հարցերի (ներառյալ՝ Իրանի միջուկային ծրագրի հետ կապված խնդիրների) բացառապես դիվանագիտական միջոցներով կարգավորմանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ երկու երկրների համապատասխան գերատեսչությունները կպահպանեն սերտ փոխգործակցություն այդ կապակցությամբ:

Անդրադարձ է եղել նաեւ Ուկրաինայի խնդրին: Պուտինը երախտագիտություն է հայտնել թուրքական կողմին՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ ուղիղ բանակցությունների կազմակերպմանն աջակցելու համար: Նշվել է, որ Ռուսաստանը խստորեն կատարում է բանակցությունների երկրորդ փուլի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները, ներառյալ՝ զոհված զինվորականների մարմինների փոխանցումը եւ ռազմագերիների փոխանակումը:

Կողմերը կարծիքներ են փոխանակել երկկողմ օրակարգի արդիական հարցերի, այդ թվում՝ էներգետիկայի ոլորտի վերաբերյալ:

ՀԱՐՁԱԿՈՒՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՆԱՍՆԵՐ ՉԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ԱԳԱՏԷ-ի ղեկավար Ռաֆայել Գրոսսին հայտարարել է, որ Իրանի ուրանի հարստացման գլխավոր գործարանի՝ Նաթանզի միջուկային օբյեկտի վրա հարձակումից հետո «լրացուցիչ վնասներ» չեն արձանագրվել, եւ «չկան նշաններ» ստորգետնյա կասկադային սրահի վրա հարձակման մասին. հայտնում է CNN-ը:

«Այնուամենայնիվ, կասկադային սրահում էլեկտրաէներգիայի անջատումը կարող էր վնաս հասցնել այնտեղ տեղակայված ցենտրիֆուգներին»,- նշել է Գրոսսին:

Նա նաեւ նշել է, որ Իրանի Սպահանի միջուկային օբյեկտում վնասվել է չորս շենք, մյուս միջուկային օբյեկտներում վնասներ չկան: Ֆորդոյի վառելիքի հարստացման գործարանի կամ Խոնդաբի ջրային ռեակտորի կառուցման տարածքում որեւէ վնաս չի նկատվել:

ԱՀՌԵԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԻՐԱՆ-ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՆՈՒՄ Է

Իսրայելի եւ Իրանի միջեւ ռազմական հակամարտությունը մտել է նոր՝ առավել վտանգավոր փուլ: Վերջին օրերի ընթացքում երկու երկրները միմյանց դեմ իրականացրել են մի շարք ռազմական գործողություններ, որոնք հանգեցրել են զգալի մարդկային կորուստների եւ նյութական վնասների:

Իսրայելի պաշտպանության բանակը (ԻՊԲ) հայտնել է, որ օդուժի կործանիչները հարվածներ են հասցրել Իրանի Հեղափոխական գվարդիայի Ղուդս ուժերի հրամանատարական կենտրոններին: Ըստ նրանց՝ այս կենտրոններից էին ղեկավարվում Իսրայելի դեմ ահաբեկչական գործողությունները:

Հրապարակված տեսանյութերում երեւում է, որ Թեհրանում թիրախավորվել է 10 ռազմական օբյեկտ: Հարվածի է ենթարկվել նաեւ Իրանի արտգործնախարարության շենքը, կան վիրավորներ:

Իսրայելական հարվածների արդյունքում սպանվել են Իրանի Հեղափոխական գվարդիայի բարձրաստիճան պաշտոնյաներ՝ հետախուզության պետ գեներալ Մոհամմադ Քազեմին եւ նրա տեղակալ գեներալ Հասան Մոհաքիքը: Ավելի վաղ սպանվել էր նաեւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատար Հոսեին Սալամին: Իսրայելը հարձակման հենց առաջին ժամերին թիրախավորել է միջուկային գիտնականներին, ովքեր, ինչպես պնդում են, ունեին միջուկային զենք պատրաստելու եւ նախագծելու խոր գիտելիքներ: Մոտ 25 գիտնական է թիրախավորվել, սակայն մինչեւ այժմ հաստատվել է առնվազն 6 գիտնականի մահ:

Իրանը պատասխան գործողություն էր իրականացրել՝ արձակելով հարյուրավոր բալիստիկ հրթիռներ դեպի Իսրայելի տարածք: «Ճշմարիտ խոստում 3» անվանված օպերացիայի շրջանակներում թիրախավորվել են բնակելի շենքեր եւ ենթակառուցվածքներ:

Իսրայելի Հայֆա քաղաքում հրթիռները հարվածել են նավթավերամշակման գործարանի շրջակայքին՝ առաջացնելով հրդեհներ եւ վնասելով շենքեր: Հարվածներ են հասցվել նաեւ Իսրայելի հարավային Զավդիել բնակավայրին:

Իրանի առողջապահության նախարարության տվյալներով՝ իսրայելական հարվածների հետեւանքով զոհվել է առնվազն 224 մարդ, վիրավորվել՝ 1,277: Ողբերգականն այն է, որ զոհերի 90%-ը քաղաքացիական անձինք են:

Իսրայելում իրանական հարվածների հետեւանքով զոհվել է 17 մարդ, վիրավորվել՝ 380: Թեհրանի բնակիչները զանգվածաբար փորձում են լքել մայրաքաղաքը: Բենզալցակայանների մոտ գոյացել են երկար հերթեր: Բնակիչները նշում են, որ քաղաքում չկան պաշտպանական կառույցներ, որտեղ հնարավոր կլինի թաքնվել վտանգի դեպքում:

Շատերը փորձում են հասնել Կասպից ծովի ափամերձ՝ ավելի գյուղական եւ մեկուսացված շրջանները, սակայն ճանապարհները խցանված են:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ հույս է հայտնել, որ Իսրայելի եւ Իրանի միջեւ համաձայնություն է կկնքվի: Միեւնույն ժամանակ նա նշել է, որ «երբեմն պետք է թույլ տալ, որ կռվեն»:

Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը վերահաստատել է Եվրոպայի հանձնառությունը խաղաղության, կայունության եւ դիվանագիտական ջանքերի հանդեպ: Նա նաեւ մտահոգություն է հայտնել Իրանի միջուկային ծրագրի զարգացման վերաբերյալ:

Իսկ Թուրքիայի նախագահ Էրդողանը ողջունել է Թրամփի կոչը եւ ընդգծել երկկողմանի վնասների անդառնալի բնույթը:

Հակամարտությունը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային նավթի շուկայի վրա: Նավթի գները շարունակում են աճել՝ անցյալ շաբաթվա 7% աճից հետո: ԱՄՆ նավթի գինը բարձրացել է 1.2%-ով՝ հասնելով 73.85 դոլարի մեկ բարելի համար:

Իսրայելի ՊԲ շտաբի պետ Էյալ Զամիրը հայտարարել է, որ գործողությունները Իրանի դեմ ոչ միայն կշարունակվեն, այլեւ կուժեղացվեն: Նրա խոսքերով՝ սա անհրաժեշտ է Իրանի կողմից «գոյութենական սպառնալիքը» չեզոքացնելու համար:

Երկու երկրները փոխադարձաբար նախազգուշացրել են միմյանց քաղաքացիներին՝ հեռու մնալ ռազմական եւ գիտական օբյեկտներից: Սա կարող է վկայել նոր հարվածների հավանականության մասին:

Միջազգային հանրությունը շարունակում է կոչ անել կողմերին՝ վերադառնալ դիվանագիտական երկխոսության դաշտ եւ կանխել հակամարտության հետագա էսկալացիան: Հիշեցնենք, որ ԱՄՆ հետախուզական գործակալությունները փետրվարից ի վեր զգուշացնում էին, որ Իսրայելը, հավանաբար, այս տարի կփորձի հարվածել Իրանի միջուկային ծրագրի կարեւորագույն օբյեկտներին, հայտնում է CNN-ը: Իսկ ավելի վաղ CNN-ը հայտնել էր, որ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացված օպերացիայի գաղտնի նախապատրաստական աշխատանքները տեւել են մոտ 8 ամիս:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 6060 ՄԱՐՄԻՆ Է ՀԱՆՁՆԵԼ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Ռուսաստանն Ուկրաինային է հանձնել Ուկրաինայի զինված ուժերի զոհված սպաների ու զինվորների ընդհանուր թվով 6060 մարմին: Այս մասին հայտնել է Ռուսաստանի Դաշնության նախագահի օգնական Վլադիմիր Մեդինսկին:

«Այն կողմից ստացվել է մեր 78 զոհված», - գրել է Մեդինսկին իր Telegram ալիքում:

Մեդինսկին, որը ստամբուլյան բանակցություններում ռուսական պատվիրակության ղեկավարն էր, ընդգծել է, որ «գերիների փոխանակումը նույնպես շարունակվում է, կազմակերպվել է առաջնագծից ծանր վիրավորների շտապ սանիտարական հանձնում»:

«Ռուսաստանը կատարել է Ստամբուլում տված խոստումները», - ընդգծել է Ռուսաստանի Դաշնության նախագահի օգնականը:

Իր հերթին Ռուսաստանի Դաշնության ռազմական գերատեսչությունը հայտնել է, որ Ռուսաստանը պատրաստ է ուկրաինական կողմին հանձնել Ուկրաինայի զինված ուժերի եւս 2239 զոհվածների մարմիններ:

ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Իրանը կհարվածի Իսրայելի բնակելի թաղամասերին եւ ռազմական օբյեկտներին, եթե Թել Ավիվը շարունակի հարվածել իրանական բնակչությանը, հաղորդում է Tasnim պետական գործակալությունը՝ հղում անելով իր աղբյուրին:

«Եթե Իսրայելը եւս մեկ քայլ ձեռնարկի իրանական բնակելի շենքերի վրա հարձակվելու հարցում, Իսրայելում անվտանգ վայր չի մնա: Իրանն արդեն թիրախավորել է թաքնված եւ բացահայտ ռազմական ռազմավարական օբյեկտներ, մենք կոչնչացնենք այդ օբյեկտները իսրայելական զինվորականների գլխավերեւում: Սակայն մինչ օրս Իրանը ուղղակիորեն չի թիրախավորել բնակելի թաղամասերը: Ակնհայտ է, որ եթե իսրայելցիները հիմարություն գործեն, մենք նրանց ոչ մի անվտանգ վայր չենք թողնի, իհարկե, մենք արդեն ապացուցել ենք նրանց, որ կարող ենք դա անել», - ասվում է հայտարարության մեջ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՆՉ ԵՆ ՏԱՐԵԼ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՏԱՆԻՑ

ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի տանից ի՞նչ է տարել ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն.

ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ մի քանի ժամ խուզարկելուց հետո տանից տարել են մի շարք փաստաթղթեր: Ավելին՝ տունը խուզարկելուց հետո Աբրահամյանին տարել են Հակակոռուպցիոն կոմիտե, հարցաքննել ու մեղադրանք առաջադրել:

Սա էլ դեռ վերջը չէ. մեղադրանքից հետո Հովիկ Աբրահամյանին տարել են Հակակոռուպցիոն դատարան ու դատարանում միջնորդում ներկայացրել՝ կալանավորելու, սակայն դատարանը որոշել է տնային կալանք սահմանել:

Հիշեցնենք, որ հունիսի 14-ին ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի նկատմամբ դատարանը խափանման միջոց է ընտրել տնային կալանքը:

Նախկին վարչապետին հունիսի 13-ի կեսօրին ձերբակալել էին: Կոմիտեի փոխանցմամբ՝ մեղադրանք է առաջադրվել փողերի լվացման, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու հոդվածներով:

Աբրահամյանը, որ երկար տարիներ եղել է Հանրապետական կուսակցության անդամ, զբաղեցրել բարձր պաշտոններ, 2017-ից Հանրապետականի անդամ չէ: 2018 թվականին, երբ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ իշխանության եկավ «Քաղաքացիական պայմանագիրը», Աբրահամյանը հենց նույն տարում հայտնվեց իրավապահների ուշադրության կենտրոնում:

Այն ժամանակ հատուկ քննչական ծառայությունում քրեական գործ էր հարուցվել, եւ Աբրահամյանին մեղադրանք էր առաջադրվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու համար, բայց նախկին վարչապետն այն ժամանակ ո՛չ ձերբակալվել, ո՛չ էլ կալանավորվել էր: Նրան միայն արգելել էին լքել երկիրը:

Աբրահամյանն այն ժամանակ պնդել էր, թե գործը շինծու է, եւ իրեն հետապնդում են իշխանությանը քննադատելու համար:

2018 թվականի այս իրադարձություններից հետո 67-ամյա Աբրահամյանը երբեք աչքի չի ընկել հանրային ակտիվությամբ, լռություն է պահպանել:

2023-ին Դատախազությունը եւս մի քրեական գործի մասին էր հայտնել: Աբրահամյանին մեղադրանք էր առաջադրվել այն նույն հոդվածներով, որոնք առաջադրվում են այսօր՝ փողերի լվացում, պաշտոնեական լիազորությունների չարաշահում եւ ապօրինի ձեռնարկատիրությանն ապօրինի մասնակցություն: Դատախազությունն այն ժամանակ հաղորդել էր, որ 2006 թվականից մինչեւ 2016 թվականը, լինելով պաշտոնատար անձ, անցել է պաշտոնեական լիազորությունները, ինչպես նաեւ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արգելքին հակառակ՝ վստահված անձանց միջոցով մասնակցել է ավազի արդյունահանմամբ զբաղվող «Ավազահատիկ» ընկերության կառավարմանը՝ օրինականացնելով դրա արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված գույքը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

13-ԱՄՅԱ ՏՂԱՅԻՆ ԳՏԵԼ ԵՆ

Հունիսի 13-ին ոստիկանություն զանգած կինը հայտնել էր, որ 13-ամյա տղան դուրս է եկել Վանաձորի ավտոկայանից եւ նրա գտնվելու վայրի մասին տեղեկություն չունի:

Ինչպես հայտնել են ՆԳՆ ոստիկանությունից, Տարոնի եւ Բազումի բաժինների համայնքային ոստիկանների, Լոռու մարզի գումարտակի պարեկների համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում՝ ժամը 17:20-ին, Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի վերջնամասում 13-ամյա պատանին հայտնաբերվել ու ներկայացվել է Տարոնի բաժին, ապա հանձնվել ծնողին:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Լոռու մարզային քննչական վարչություն:

ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության նախկին պետ Արամ Զաքարյանը հունիսի 20-ին հրավիրվել է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Այդ մասին տեղեկանում ենք «Ազդարար» հարթակից:

«ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Զաքարյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր», - ասված է հաղորդագրությունում:

ԿԱՆԳԱՌԸ ՎՆԱՍԱԾ ՎԱՐՈՐԴԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Հունիսի 4-ին Համայնքային ոստիկանության Վեդու բաժին տեղեկություն էր ստացվել, որ հունիսի 3-ի լույս 4-ի գիշերը Տափերական գյուղի Արամ Խաչատրյան եւ Հ-8 կենտրոնական փողոցների հատման վայրում գտնվող գազալցակայանի հարակից տարածքում տեղադրված կանգառը, դեռեւս չպարզված վարորդի կողմից, ավտոմեքենայով վնասվել է: Նախնական տվյալներով՝ պատճառվել է 700 հազար դրամից ավելի վնաս:

Նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Համայնքային ոստիկանության Վեդու բաժնի ծառայողները, համագործակցելով Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության գործընկերների հետ, պարզել են, որ կանգառը հունիսի 4-ին՝ ժամը 03:20-ի սահմաններում, հետընթաց կատարելիս վնասել է «Հովո» մակնիշի բեռնատարի 38-ամյա վարորդը: Հունիսի 12-ին նա Ոսկետափ գյուղում հայտնաբերվել է: Բեռնատարը տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վեդու քննչական բաժին: Նախաքննությունը շարունակվում է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆԸ ԿՐԿԻՆ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ArmLur.am-ի հավաստի տեղեկություններով՝ երեկ Արցախի նախկին նախագահ Սամվել Շահրամանյանը կրկին հրավիրվել է ՀՀ քննչական կոմիտե ու հարցաքննվել: Փաստաբան Ռոման Երիցյանը ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեց տեղեկությունները:

Վերջին մեկ ամսում նա 8-րդ անգամ է հրավիրվել ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն ու հարցաքննվել:

ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ Արցախի նախագահի գործը վերաբերում է Արցախի Հանրապետության հանձնմանը, պատերազմի ժամանակ ցուցաբերած զինվորական պաշտոնեական անփութությանը, ինչպես նաեւ զենք-զինամթերք եւ սպառազինությունը թշնամուն հանձնելուն:

Սամվել Շահրամանյանին որեւէ մեղադրանք չի առաջադրվել, եւ նա հարցաքննվում է վկայի դատավարական կարգավիճակով. դատելով իրավիճակից՝ նրան առաջիկայում մեղադրանք կառաջադրեն, ու չի բացառվում՝ գործը հասնի կալանավորմանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«ՔՈՖՖԻ ՀԱՈՒՍԸ» ԴԱՏԱՐԱՆ Է ԴԻՄԵԼ

«Coffee House»-ի սեփականատերերն ընդդեմ ՊԵԿ-ի գործընթաց են սկսել:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Coffee House» ՍՊԸ-ն դիմել է դատարան ու պահանջում է, որ դատարանը ՊԵԿ-ի որոշումը անվավեր ճանաչի: Ըստ էության՝ ՊԵԿ-ը տուգանել է ընկերությանը, եւ նա, չհաշտվելով տուգանքի որոշմանը, դիմել է դատարան:

Հիշեցնենք, որ ապրիլի 17-ին հայտնի դարձավ, որ «Coffee House»-ի սեփականատերեր Հարություն Մկրտչյանի եւ Նարեկ Քեյանի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել: Քննչական կոմիտեից հայտնել էին, որ առանձնապես խոշոր չափերով (450 մլն ՀՀ դրամ) հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում տեղի է ունեցել 125 մլն ՀՀ դրամի վերականգնում:

2 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը:

Հարություն Մկրտչյանը եւ Նարեկ Քեյանը «Coffee House» ընկերությունը հիմնել են 2015-ին: Եվ ահա, քրեական հետապնդմանը զուգահեռ ընկերությունը դատարանի դռներն է ընկել ու որոշումներ է ցանկանում չեղարկել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:
Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 13-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 267 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՐԿՈՒՏԸ ՄԵԾ ՎՆԱՍՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ

Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանից տեղեկացանք, որ հունիսի 14-ի երեկոյան տեղացած կարկուտը շատ մեծ վնասներ է պատճառել սահմանամերձ Բերդավան գյուղին, որտեղ ոչնչացել է այգիների, բաջարանոցների ողջ բերքը, վնասվել են բազմաթիվ տների տանիքներ, ավտոմեքենաներ: Կարկուտը մեծ վնասներ է պատճառել նաեւ Նոյեմբերյան քաղաքի, Կողբ եւ Լճկաձոր գյուղերի մի մասին: Նոյեմբերյան քաղաքում բացի այգիների ու բանջարանոցների կորսված բերքից, վնասվել են նաեւ ավտոմեքենաներ: Նոյեմբերյանի համայնքապետարանը հանձնաժողով է կազմում կարկտահարության վնասները ճշտելու, տվյալները կառավարություն ներկայացնելու համար: Դիլիջան քաղաքում հունիսի 14-ի երեկոյան՝ ժամը 20-ից հետո, մոտ 20 րոպե տեւողությամբ տեղացած կարկուտը ոչնչացրել է այգիների եւ բանջարանոցների բերքը: Դիլիջանում տեղացած կարկուտը չափերով հավի ձվից մեծ է եղել: Վերջին տարիներին մեծ կարկտահարություններից հետո Տավուշի մարզի համայնքապետարանները հանձնաժողովներ են կազմում, հաշվառում կարկտահարության պատճառած վնասները, տվյալները ներկայացնում մարզպետարան, կառավարություն. սակայն կարկտահարությունից տուժած գյուղացիներին պետական աջակցություն չի ցուցաբերվում:

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ «ԳՑԵԼ ԵՆ»

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հունիսի 11-ին որոշում է ընդունել «Փախանյան ընդ փարթներս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այդ որոշման մեջ գրված է, որ Դիլիջանի համայնքապետարանն այդ ընկերության հետ պայմանագիր է կնքել Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ: Պայմանագրի արժեքը կազմել է 4 միլիոն դրամ: Որպես համայնքի ղեկավարի որոշման հիմք՝ նշված է, որ ընկերությունը չի կատարում պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Որոշման մեջ «Փախանյան ընդ փարթներս» ՍՊԸ-ի գործունեության հասցեն նշված է Երեւան քաղաքը: Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմը հագեցած է առաջին խմբի, առաջատար եւ գլխավոր բազմաթիվ մասնագետներով, համայնքապետարանն իր աշխատակազմում ինչո՞ւ իրավաբաններ չունի, որ օգտվում է իրավաբանական տարբեր ընկերությունների ծառայություններից ու տուժում է՝ մսխելով համայնքի փողերը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՀԱՋԱՆԳ. ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԲՐՅՈՒՍՈՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՎԵՐԱԾՎԵԼ Է ՎԱԽԻ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՊԱՐԱՏԻ

Armlur.am-ը կրկին բաց նամակ է ստացել Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի աշխատակազմից, որտեղ նկարագրում են, թե ինչ խայտառակ իրավիճակ է այնտեղ:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում իշխանությունը վերածվել է անձնական հաշվեհարդարի գործիքի:

Այսօր արդեն ակնհայտ է՝ ռեկտոր Դավիթ Գյուրջինյանն իր տեղակալների՝ Դոնարա Ղազարյանի եւ Գեւորգ Հակոբյանի հետ համալսարանը ղեկավարում է ոչ թե գիտական արժեքներով, այլ վրեժի, վախի եւ ճնշման մեխանիզմներով:

Արդեն իսկ տարբեր բարձրագույն ատյաններում դժգոհությունների, բողոքների, փաստերի ներկայացման վրա ռեկտորն արձագանքում է միայն արհամարհանքով: Նրա մոտեցումը կարելի է ամփոփել հետեւյալ ցինիկ արտահայտությամբ. «ԿԳՄՍ նախարարի հետ բարձր սարից թքած ունենք ձեր բողոքների վրա»: Սա մի պաշտոնյայի խոսք չէ. սա վտանգավոր ինքնիշխանության հայտ է պետական կառույցների նկատմամբ:

Մարդիկ, ովքեր տարիներ շարունակ նվիրված են եղել համալսարանի զարգացմանը, աշխատանքից ազատվում են առանց հիմնավոր շարժառիթի՝ միայն այն պատճառով, որ համարձակվել են հայտվել այդ եռյակի «սեւ ցուցակում», կամ պաշտպանել ակադեմիական արդարությունը: Հակառակ ձայները ճնշվում են անմիջապես: Սա էլ է մեկ «պատիժ»՝ Գյուրջինյանի անձնական շահերից բխող վրեժի շղթայի մեջ:

Համալսարանը, որը պետք է լինի մտքի, վերլուծության եւ արժեքների կենտրոն, վերածվել է վախի մթնոլորտում գործող ապարատի: Ռեկտորի գործողությունների պատճառով համալսարանականներն ասես գայլի երախում նստած լինեն, որոնք տեսնում են՝ ոնց է նա մժեղներին կուլ տալիս: Մեկ առ մեկ կուլ են գնում անկախ, արժանապատիվ ու սկզբունքային մարդիկ:

Այս ամենը զուգորդվում է վախեցնելու, սպառնալիքների եւ բոլորին համատարած լռեցնելու քաղաքականությամբ: Մարդկանց բացեիբաց զգուշացնում են եւ հերթով, շարքով դռնից դուրս հրավիրում: Իսկ համալսարանականները, ովքեր դեռ մնում են, ապրում են սուր ատամների ստվերում՝ ենթադրելով, թե ում հերթն է լինելու հաջորդը:

Այս իրավիճակը պետք է ահազանգ լինի ոչ միայն համալսարանական համայնքի, այլեւ ամբողջ հասարակության համար: Կրթական հաստատություններում չի կարող եւ չպետք է իշխի անձնական հաշվեհարդարի, քաղաքական շանտաժի կամ վախի մթնոլորտը: Մենք պարտավոր ենք բարձրաձայնել, քանի դեռ Բրյուսովի համալսարանի անունը վերջնականապես չի խավարել վրեժխնդիր գիշատիչի ձեռքում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանական Mehr լրատավական գործակալությունը հայտնում է, որ իսրայելական լրատվամիջոցները հրապարակել են վիճակագրություն Իրանի կողմից օկուպացված տարածքներում հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարձակումների մասին:

Սիոնիստական ռեժիմի լրատվամիջոցները հաղորդել են, որ «Ճշմարիտ խոստում 3» գործողության ընթացքում Իրանը հարձակման 11 փուլերի ընթացքում օկուպացված տարածքներում գտնվող բազմաթիվ թիրախների վրա արձակել է ավելի քան 370 բալիստիկ հրթիռ եւ ավելի քան 100 անօդաչու թռչող սարք:

Այս հարձակումները լուրջ ավերածություններ են առաջացրել մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Թել Ավիվում եւ հանգեցրել են միջուկային հարձակումներին դիմակայելու համար նախատեսված ապաստարանների փլուզմանը, ինչպես նաեւ ռազմական եւ քաղաքային ենթակառուցվածքների մեծ վնասների:

Իսրայելական աղբյուրները նաեւ հայտնել են, որ Իրանի կողմից օկուպացված Պաղեստինի դեմ ուղղված պատասխան ավիահարվածների հետեւանքով զոհվել եւ վիրավորվել է առնվազն 97 սիոնիստ:

Իսրայելական ռեժիմի 12-րդ ալիքը երկուշաբթի՝ առավոտյան, հաղորդել է, որ Թել Ավիվից հյուսիս-արեւելք գտնվող Բատ Տիկվա շրջանում փլատակների տակից դուրս է բերվել Իսրայելի 5 քաղաքացու մարմինը:

Հաղորդումներում նաեւ նշվում է, որ առնվազն 92 իսրայելցի վիրավորվել է Իրանի կողմից օկուպացված տարածքների վրա իրականացված պատժիչ ավիահարվածների հետեւանքով:

ԻՐԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Էսմայիլ Բաղաեին կոշտ հայտարարություններով է հանդես եկել՝ քննադատելով միջազգային հանրության արձագանքը Իսրայելի վերջին հարձակումների վերաբերյալ:

«Հստակ հայտարարում ենք, որ բոլոր երկրները, որոնք աջակցել են սիոնիստական ռեժիմին կամ փորձել են արդարացնել այս ագրեսիան, համարվում են Իրանի դեմ իսրայելական հարձակման հանցակիցներ», - նշել է Բաղաեին երկուշաբթի օրվա մամուլի ասուլիսի ժամանակ:

Խոսնակը հատկապես ընդգծել է Նաթանզի միջուկային օբյեկտների վրա հարձակման լրջությունը. «Իսֆահանի Նաթանզի միջուկային կառույցների վրա հարձակումը բացարձակապես խախտում է բոլոր միջազգային նորմերն ու կանոնները»:

Բաղաեին հատուկ շեշտել է, որ սա ոչ թե պարզապես երկու պետությունների միջեւ հակամարտություն է սահմանների կամ գաղափարական տարաձայնությունների շուրջ, այլ «պատերազմ է մարդկության դեմ»:

«Այս պատերազմն ուղղված է ՄԱԿ-ի կանոնադրության, օրենքի գերակայության եւ բոլոր այն արժեքների դեմ, որոնց համար մարդկությունը պայքարել է», -ընդգծել է նա՝ կոչ անելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին կատարել իր պարտականությունները:

Խոսնակի խոսքով՝ «զսպվածություն պահպանելու կոչերը ոչինչ են, քան կեղծավորություն»:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 31 պատահար, 2 մարդ մահացել է, 41-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 03 հուլիսի 2025 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1. Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 13 շենք, 29 հասցեում գտնվող 80,6 քմ բնակարան,

Լոտի մեկնարկային գինը՝ 32300000 (երեսուներկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր, Հ. Քոչարի փողոց, 16 շենք, 30 հասցեում գտնվող 101,6 քմ բնակարան,

Լոտի մեկնարկային գինը՝ 50000000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՁԱԽՈՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՂԱՎՈՐՆԵՐ ՈՐՈՆԵԼ

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԱՐՇԱՎԸ ՆՈՐ ԵՐԵՎՈՒՅԹ ՉԷ

Որեւէ տրամաբանական բացատրություն չեմ կարող գտնել այն փաստի համար, որ նման անվտանգային սուր մարտահրավերների պայմաններում իշխանությունները նախաձեռնել են արշավ եկեղեցու դեմ. «Եկեղեցի-պետություն» հիմնախնդիրներին նվիրված քննարկման ժամանակ ասաց Տեր Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ եկեղեցու դեմ ուղղված իշխանական արշավը նոր երեւույթ չէ եւ սկսվել է դեռեւս, այսպես կոչված, հեղափոխությունից հետո: «Առաջին հերթին մեզ մեղադրում են իբրեւ թե քաղաքականությամբ զբաղվելու մեջ: Սա բացարձակապես սխալ մեկնաբանություն է «եկեղեցին պետությունից անջատ է» սկզբունքի վերաբերյալ: Այդ սկզբունքը ներդրվել է նախ եւ առաջ՝ պետությունն իշխանությունների ոտնձգություններից պաշտպանելու համար, ոչ թե եկեղեցուն կամ եկեղեցականներին արգելելու՝ իրենց դիրքորոշումը հայտնել հասարակական կարեւորագույն գործընթացների վերաբերյալ»,- ասաց արքեպիսկոպոսը:

Նա արձանագրեց, որ եկեղեցին նաեւ քննադատության է ենթարկվում իբրեւ թե պատմամշակութային հուշարձանների պահպանության հարցում բավարար ջանքեր չգործադրելու համար:

«Ես վիճակագրություն չեմ ներկայացնի, միայն խնդրում եմ ծանոթանալ՝ Հայաստանի Հանրապետությունում որքան պատմամշակութային հուշարձան կա: Եթե չեմ սխալվում՝ մոտ 24,000, որոնցից 18,000-ը՝ պաշտամունքային նշանակության: Այդ 18,000-ից եկեղեցուն հանձնվել է առավելագույնը 600-ը: Այսինքն՝ եկեղեցին իր սուղ միջոցներով պահում է շուրջ 600 հուշարձան, մնացածի պահպանումը պետության պարտականությունն է, որը, ակնհայտ է, պատշաճ չի իրականացվում, եւ հասկանալի է՝ ինչու. ֆինանսական միջոցների պակաս կա: Օրինակ՝ վերջին յոթ տարիներին պետությունը հուշարձանների պահպանության վրա ծախսել է ընդամենը մոտ 5 միլիոն դոլար: Համեմատության համար նշեմ՝ միայն Մայր Տաճարի վերականգնման աշխատանքները գերազանցել են 12 միլիոն դոլարը: Եվ այդ աշխատանքներին այս իշխանությունը որեւէ ֆինանսական աջակցություն չի ցուցաբերել», - ընդգծեց Տեր Արշակը:

Նա նաեւ անդրադարձավ աղանդավորական կազմակերպությունների դեմ պայքարի վերաբերյալ քննադատություններին: «Հարցնում են՝ ինչու եկեղեցին արդյունավետ չի պայքարում աղանդավորների դեմ: Բայց ինչպե՞ս կարող է պայքարել, երբ հենց իշխանություններն են լայնորեն բացել այդ կազմակերպությունների առաջ դռները, խրախուսում են այլասերության քարոզը, կրոնական կազմակերպությունների մարդորսությունը: Բավական է մի քանի անգամ շրջել Հյուսիսային պողոտայով, որպեսզի տեսնեք նման դրսեւորումներ», - ասաց նա:

Արշակ արքեպիսկոպոսը մեկնաբանեց նաեւ կուսակրոնության ուխտի շուրջ շրջանառվող քննարկումները: «Տպավորություն է ստեղծվում, թե Արցախը հանձնվել է կամ տարածքներ ենք կորցրել, որովհետեւ կուսակրոն հոգեւորականները խախտել են իրենց ուխտը: Սա ուղղակի զավեշտ է: Ակնհայտ է՝ մարդը փորձում է ձախողումների համար մեղավորներ հորինել», - եզրափակեց նա:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՔԱՄԻ, ԿԱՐԿՈՒՏ ԵՎ ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎ

ԱՊԱՐԱՆՈՒՄ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՉԱՓԸ

Հունիսի 14-ից 15-ը ՆԳՆ Փրկարար ծառայությունում ստացվել են ահազանգեր՝ Երեւանում, Շիրակի, Արագածոտնի, Լոռու եւ Տավուշի մարզերում ուժեղ քամու, հորդառատ անձրեւի եւ կարկուտի հետեւանքների վերաբերյալ:



Փրկարար ծառայության ստորաբաժանումները՝ համագործակցելով ՆԳՆ ոստիկանության ծառայողների հետ, իրականացրել են իրավիճակից բխող անհրաժեշտ գործողություններ՝ տարածքների սահմանազատում, տանիքների, կառուցատարրերի ապամոնտաժում, անձրեւատար խողովակների ամրացում, տապալված ծառերի մասնատում եւ հեռացում:

Ուժեղ քամու հետեւանքով հունիսի 14-ից 15-ը գրանցվել է ընդհանուր 38 դեպք, որոնցից 1-ը՝ Երեւանում, 3-ը՝ Արագածոտնի, 1-ը Լոռու, 33-ը Շիրակի մարզում: Զոհեր եւ վիրավորներ չկան:

Հունիսի 14-ից 15-ը Տավուշի, Լոռու եւ Շիրակի մարզերում տեղացած կարկուտի հետեւանքով վնասվել է 6 տրանսպորտային միջոց:

Հունիսի 15-ին՝ ժամը 16:10-ից սկսած, ահազանգեր են ստացվել, որ Ապարանում եւ Լուսագյուղ բնակավայրում ուժեղ քամու (գրանցվել է քամու ուժգնացում՝ 39,2 մ/վ արագությամբ) հետեւանքով վնասվել են շենք-շինությունների տանիքներ, ավտոմեքենաներ, տապալվել են ծառեր ու էլեկտրասյուներ, ինչպես նաեւ արեւային կայաններ ու ջրատաքացուցիչներ:

Ապարանի համայնքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ հունիսի 16-ի ժամը 09:00-ի դրությամբ վնասվել են 20 բազմաբնակարան շենքի, 86 առանձնատան, 3 դպրոցի, 1 մշակույթի տան, իրավապահ կառույցների 2 տարածքային ստորաբաժանման ու 24 կազմակերպության վարչական շենքերի տանիքներ: Բացի այդ, վնասվել է 70 էլեկտրասյուն, 30 տրանսպորտային միջոց, 2 խաղահրապարակ: Տապալվել է 100-ից ավելի ծառ:

Փրկարար ծառայության Արագածոտնի, Արմավիրի եւ Կոտայքի մարզային փրկարարական վարչություններում եւ ՀՆՓԱԻ կենտրոնում հայտարարվել է անձնակազմի հավաք:

Փրկարարական աշխատանքներին ներգրավվել են 6 մարտական հաշվարկ, 8 օպերատիվ խումբ, 154 փրկարարական ծառայող, որոնք հեռացրել, ինչպես նաեւ ամրացրել են վտանգավոր թիթեղներն ու կառուցատարրերը, մասնատել եւ հեռացրել են երթեւեկելի գոտիներում ու տրանսպորտային միջոցների վրա տապալված ծառերը:

Տուժել է հինգ անձ, որոնք հոսպիտալացվել են եւ ստացել անհրաժեշտ բուժօգնություն:

Հունիսի 16-ին վերսկսված աշխատանքներին ներգրավվել է 205 փրկարարական ծառայող:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԿՈՂՔ ԿՈՂՔԻ» Գ

ՄԵԿՆԱՐԿԵՑ IDBank-Ի՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

«Քո կողքին»-ը վերադարձավ նոր ձեւաչափով, նոր ասելիքով եւ նոր անունով: Դեռեւս 2024-ին մեկնարկած, բացառապես տեղահանված մեր արցախցի հայրենակիցներին ուղղված եւ 150 երեխայի սոցիալական աջակցություն ցուցաբերած «Քո կողքին» ծրագիրն արդեն կոչվում է «Կողք կողքի» եւ ուղղված է ոչ թե սոցիալական ուղիղ աջակցությանը, այլ բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար նոր հնարավորությունների ստեղծմանը:

Սոցիալական պատասխանատվության քաղաքականությանը համահունչ՝ «Կողք կողքի» ծրագրի թիրախում երկու կարեւորագույն ուղղություններ են՝ կրթության միջոցով աշխատանքի հնարավորություն եւ կրթության խրախուսում: Որպես ծրագրի մեկնարկ՝ ընտրվել է արցախցի կանանց հզորացման ուղղությունը, որը բանկը իրականացնում է «Հայ մայրեր» ՀԿ-ի հետ համագործակցությամբ. թվով 65 արցախցի կանայք IDBank-ի ֆինանսավորմամբ կստանան մասնագիտական կրթություն կար ու ձեւի եւ մատնահարդարման ոլորտում եւ կապահովվեն աշխատանքային գործիքներով ու պարագաներով:

IDBank-ի հաղորդակցության եւ սոցիալական պատասխանատվության ծրագրերի վարչության ղեկավար Տաթեւիկ Վարդեւանյանը նշում է. «Այս փուլում մենք գտնում ենք, որ շատ ավելի կարեւոր է, որպեսզի մեր հայրենակիցները իսկապես արմատավորվեն ՀՀ-ում եւ որեւէ պարագայում չլքեն մեր հայրենիքը: Համոզված ենք, որ կողք կողքի լինելը եւ մեր հայրենակիցներին նոր մասնագիտություն ու կրթություն ապահովելը առաջ շարժվելու, մեր հայրենիքին ծառայելու, Հայաստանը շենացնելու ամենաճիշտ ճանապարհն է: Սա է պատճառը, որ «Քո կողքին»-ը վերափոխեցինք «Կողք կողքի»-նի եւ մեծ հույս ունենք, որ մեր ներդումն իսկապես ծառայելու է կողք կողքի առաջ շարժվելուն եւ կողք կողքի մնալուն»:

«Հայ մայրեր» ՀԿ-ի հիմնադիր Նարինե Մանուկյանը նշում է. «Ես համարում եմ, որ սա «Հայ մայրեր» ՀԿ-ի ամենաշնորհակալ ծրագրերից մեկն է, որի արդյունքում տեսնելու ենք մարդու կյանքի որակի բարելավում: Այսինքն՝ մարդուն ոչ թե դարձնում ենք բերագործությունից կախված մեկը, որին անընդհատ օգնություն է պետք, այլ դարձնում ենք ինքնուրույն, ուժեղ անհատ, ով կարողանում է ինքնուրույն վաստակել ու ապահովել իր կարիքները: Այս ծրագրի շահառուների մեծ մասը հաշմանդամություն ունեցող երեխաների մայրեր են, 2-րդ կրիտերիան եղել են բազմազավակ ընտանիքները, եւ վերջում՝ ամենակարիքավորները, ովքեր ապրում են հեռու մարզերում եւ իսկապես ունեն աջակցության կարիք»:

Նշենք, որ «Կողք կողքի» ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորում է IDBank-ը: Շահառուներից յուրաքանչյուրին ուղղված ֆինանսական աջակցությունը՝ 250 000 դրամը, հատկացվել է բացառապես idcoin-ների տեսքով, որով ծրագրի մասնակիցները վճարել են դասընթացավարներին եւ գնել հետագա աշխատանքի համար անհրաժեշտ պարագաները հենց տեղում՝ վճարելով Idram&IDBank հավելվածով:

Հիշեցնենք, որ Արցախից բռնի տեղահանված հայրենակիցներին Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության նպատակով IDBank-ը, սկսած 2024թ. ապրիլից, իրականացնում է տարբեր ծրագրեր: Նախորդ տարի բանկի ֆինանսավորմամբ իրականացվեց «Քո կողքին» ծրագիրը, որի շրջանակում արցախցի ընտանիքներից ավելի քան 150 անչափահաս երեխա 9 ամիս շարունակ ամսական 40 հազարական դրամին համարժեք idcoin է ստացել բանկից: 2024-ին ծրագրի բյուջեն կազմել է ավելի քան 50 մլն դրամ:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԻՐԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՈՒՂԵՐՁԸ

Լիակատար աջակցություն ենք հայտնում մեր իրանցի եղբայրներին եւ քույրերին՝ հավատացած լինելով, որ Իրանը կարող է հաղթանակով դուրս գալ այս տագնապներից. այս մասին, Mehr գործակալության փոխանցմամբ, ասված է Հայ Առաքելական Եկեղեցու Թեհրանի թեմի առաջնորդ Գերաշնորհ Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանի ուղերձում:

«Իրանի ժողովուրդը հազարավոր տարիների փորձառությամբ կրակի եւ սրի միջով է անցել՝ դիմագրավելով ամեն տեսակ փորձանքի եւ փորձությունների: Մենք խստորեն դատապարտում ենք սիոնիստական պետական հարձակումները»,- ասված է ուղերձում:

Իսրայելը եւ Իրանը հարվածներ են փոխանակում հունիսի 13-ի գիշերվանից: Իսրայելն առաջինն է սկսել գործողությունը՝ պայմանավորված այն տեղեկատվությամբ, որ Իրանը մոտ է միջուկային զենք ստեղծելուն (ինչպես հայտարարել էր Իսրայելի պաշտպանության բանակը, Թեհրանն ունի բավարար ռեսուրսներ 15 միջուկային ռումբ ստեղծելու համար):

Թեհրանի դեմ Իսրայելի գործողության մեկնարկից մի քանի ժամ անց Պուտինը հեռախոսազրույց է ունեցել իր իրանցի գործընկեր Մասուդ Փեզեշքիանի եւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի հետ: Վերջինիս հետ զրույցում Պուտինը նաեւ պատրաստակամություն է հայտնել հանդես գալ որպես միջնորդ: Այս զրույցների ընթացքում նա դատապարտել է Իսրայելի գործողությունները եւ ցավակցություն հայտնել Իրանին:

ԼԱԲՈՒԲՈՒՆ ՎԱՃԱՌՎԵԼ Է 150,000 ԴՈԼԱՐՈՎ

Պեկինում կայացած մասնագիտացված աճուրդում Լաբուբուի հազվագյուտ առաջին սերնդի արձանիկը վաճառվել է 1.08 միլիոն յուանով (մոտ 150,325 դոլար): CNN-ը հաղորդում է, որ 131 սանտիմետրանոց՝ (52 դյույմ) անանուխի գույնի արձանիկը միջոցառման ամենաթանկ լոտն էր:

Լաբուբուն այս պահին ամենատարածված հավաքորդական խաղալիքներից մեկն է, որը ստեղծվել է հոնկոնգցի նկարիչ Կասինգ Լունգի կողմից եւ վաճառվում է չինական խաղալիքների հսկա Pop Mart-ի կողմից:

Վերջին ամիսներին նապաստակի մարմնով, էլֆի դեմքով այս արարածները, որոնք թե՛ զվարճալի են, թե՛ մի փոքր սարսափելի, չափազանց տարածված են դարձել ամբողջ աշխարհում՝ խանութներում գնորդների միջեւ երկար հերթերի եւ նույնիսկ կռիվների պատճառ դառնալով:

Նույնիսկ Չինաստանում, որտեղ գտնվում է Pop Mart-ը եւ որտեղ պատրաստվում են խաղալիքների մեծ մասը, Լաբուբու դժվար է գտնել:

Աճուրդում ներկայացված էին Լաբուբուի 48 առաջին սերնդի ֆիգուրներ եւ այն անվանվել է «առաջին սերնդի հավաքորդական Լաբուբուի առաջին աճուրդը աշխարհում»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳՈԼ ՉԽՓԵՑԻՆ

ԱՄՆ-ում մեկնարկեց ֆուտբոլի աշխարհի ակումբային առաջնությունը, որին առաջին անգամ մասնակցում է 32 թիմ: Մայամիում տեղի ունեցած բացման խաղում մրցեցին ամերիկյան «Ինտեր Մայամին» ու Եգիպտոսի «Ալ Ահլին»: Գրանցվեց ոչ ոքի՝ 0:0:

43-րդ րոպեին «Ալ Ահլին» ստացավ 11-մետրանոցի իրավունք, սակայն եգիպտացի կիսապաշտպան Տրեզեգեն չկարողացավ արդյունավետ իրացնել այն:

«Ինտեր Մայամիից» ամբողջ հանդիպումն անցկացրին արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին, ուրուգվայցի հարձակվող Լուիս Սուարեսը եւ իսպանացի կիսապաշտպան Սերխիո Բուսկետսը: Հունիսի 15-ին Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիան» կմրցի Նոր Զելանդիայի «Օքլենդի» (Երեւանի ժամանակով 20:00-ին), Ֆրանսիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ն՝ Մադրիդի «Աթլետիկոյի» (23:00-ին), բրազիլական «Պալմեյրասը»՝ պորտուգալական «Պորտուի» (02:00, հունիսի 16) հետ:

«ԱԹԼԵՏԻԿՈՆ» ՊԱՐՏՎԵՑ

Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ն հաղթանակով մեկնարկեց ԱՄՆ-ում անցկացվող աշխարհի ակումբային առաջնությունում: Ֆրանսիայի չեմպիոններն առաջին տուրում մրցեցին Մադրիդի «Աթլետիկոյի» հետ: Փասադենայում տեղի ունեցած խաղում իսպանացի Լուիս Էնրիկեի գլխավորած թիմն առավելության հասավ 4:0 հաշվով:

19-րդ րոպեին հանդիպման հաշիվը բացեց իսպանացի կիսապաշտպան Ֆաբիան Ռուիսը: Առաջին խաղակեսի ավելացված առաջին րոպեին աչքի ընկավ ընկավ պորտուգալացի կիսապաշտպան Վիտինյան: Երկու գոլային փոխանցումն էլ կատարեց վրացի հարձակվող Խվիչա Կվարացխելիան:

77-րդ րոպեին երկրորդ դեղին քարտ համար հեռացվեց «Աթլետիկոյի» ֆրանսիացի պաշտպան Կլեման Լանգլեն:

87-րդ րոպեին ֆրանսիացի կիսապաշտպան Սենի Մայուլուն դարձավ գոլի հեղինակ: Ավելացված 7-րդ րոպեին 11-մետրանոցն արդյունավետ իրացրեց հարավկորեացի հարձակվող Լի Կան Ինը:

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՄԱՐԶԻՉ

Սանդրո Պերկովիչը նշանակվել է Հայաստանի չեմպիոն «Նոայի» գլխավոր մարզիչ:

41-ամյա խորվաթ մասնագետը 2024-25 մրցաշրջանի երկրորդ հատվածում գլխավորել է Զագրեբի «Դինամոն», ինչպես նաեւ մարզել է լատվիական «Ռիգան» եւ ավստրիական «Շտուրմի» երիտասարդական թիմը:

Նախորդող 3 մրցաշրջանն ընդգրկված է եղել Զագրեբի «Դինամոյի» մարզչական շտաբում՝ որպես գլխավոր մարզչի օգնական: Սանդրո Պերկովիչն աշխատել է այնպիսի մարզիչների շտաբներում, ինչպիսիք են Ֆաբիո Կանավարոն, Սերգեյ Յակիրովիչը եւ Նենադ Բյելիցան:

Խորվաթիայի ամենատիտղոսակիր թիմի հետ մասնագետը դարձել է երկրի եռակի չեմպիոն, մեկական անգամ նվաճել է Գավաթը եւ Սուպերգավաթը:

● *«Բոհեմ» թատրոնում հունիսի 20-ին տեղի կունենա «Քշի գնա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-6000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում ամուսնալուծության գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում եւ որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Լուսինե Լալայան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ եթե ամուսիններին միջեւ առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց ամուսնալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում: Ամուսնալուծության գրանցման համար ամուսինները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Եթե ամուսիններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին՝ ամուսնալուծության մասին համատեղ դիմում տալու համար, ապա ամուսինների կամքի արտահայտությունը կարող է ձեւակերպվել ամուսնալուծության մասին առանձին հայտարարություններով: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացվում է՝ անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական, ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմնում ամուսինների միջեւ փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար, ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով, ամուսինների դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում: Ամուսնալուծության գրանցումը եւ ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնալուծության մասին ամուսինների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Ամուսնալուծության պետական գրանցման համար, ներառյալ վկայական տալը, գանձվում է պետական տուրք՝ 10000 ՀՀ դրամ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության դեպքում գանձվում է նաեւ 5000 ՀՀ դրամ պետական տուրք:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես է լուծվում աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ:

Ռիտա Հարությունյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս, մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին՝ լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ. Աշխատանքային պայմանագիրը գործողության ժամկետը լրանալու պատճառով լուծելիս, աշխատողը կամ գործատուն պետք է առնվազն 10 օր առաջ ծանուցի մյուս կողմին: Եթե ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում եւ աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Տավուշի մարզում

Հունիսի 14-ից 16-ը Տավուշի մարզում հորդառատ անձրեւների եւ աննախադեպ կարկտահարման հետեւանքով բնակիչները կրել են գույքային եւ գյուղատնտեսական խոշոր վնասներ:

Լուսանկարում երեւում է, թե ուժեղ կարկուտն ինչպես է կոտրել մեքենայի հետնապակին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 12 +20 + 24
Կոտայքի լեռներ	+11 + 13 +19 + 22
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28
Գեղարքունիք	+12+ 16 +19 + 22
Լոռի	+14 + 19 +24 + 26
Տավուշ	+12+ 17 + 26+ 28
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+14 + 18 + 26+ 29

Արարատ	+14 + 19 + 30+ 32
Արմավիր	+14 + 19 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	+11 + 13 + 20+ 22
Վայոց ձորի նախալեռներ	+13 + 15 + 29 + 32
Սյունիքի հովիտներ	+12+ 16 + 32+ 35
Սյունիքի նախալեռներ	+10+ 13 +25 + 27
ԼՂՀ	+10+ 12 +23 + 26
Երեւան	+19+ 21 +25 + 27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*